

Համախմբված ֆինանսական  
հաշվետվություններ և  
Անկախ ատոլիտորի եզրակացություն

«Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման  
կենտրոն» հիմնադրամ

2016թ. դեկտեմբերի 31



## Բովանդակություն

	Էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	1
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	5
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	8
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

## Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրասր Թորնթոն ՓԲԸ  
ՀՀ, ք. Երևան 0012  
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964  
Ֆ. + 374 10 260 961

Grant Thornton CJSC  
8/1 Vagharshyan str.  
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964  
F + 374 10 260 961

[www.grantthornton.am](http://www.grantthornton.am)

«Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների  
խորհրդին

### Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն»  
հիմնադրամի (Հիմնադրամ) և իր դուստր ընկերությունների (միասին՝ Խումբ)  
համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ  
հաշվետվությունները ներառում են 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ  
ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին  
ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական  
արդյունքի և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված  
հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական  
հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են  
հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են  
Խմբի՝ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի և  
նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների  
ու համախմբված դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն  
Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

### Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին  
(ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր  
պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝  
«*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների  
աուդիտի համար*» բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն  
Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների  
վարքագրի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում  
կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի  
պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս  
պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ

ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

*Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար*

Խմբի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ներին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել համախմբված ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Խմբի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Խումբը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

*Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՄ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին

ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Խմբի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Խմբի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք համախմբված ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Խումբը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:
- Գնահատում ենք ընդհանուր առմամբ համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում ընկերությունների կամ ձեռնարկատիրական գործառնությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ, որպեսզի արտահայտենք կարծիք համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի ուղղորդման, վերահսկման և իրականացման համար: Մենք ամբողջությամբ պատասխանատու ենք մեր արտահայտած կարծիքի համար:



Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Գագիկ Գյուլբուդադյան

Էմիլ Վասիլյան

Տնօրեն

Առաջադրանքի պատասխանատու



2017թ. մարտի 24



## Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն


Հազար դրամ		2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Ծանոթ.		
<b>Ակտիվներ</b>			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	1,646,005	1,654,675
Ոչ նյութական ակտիվներ		15,098	8,361
Վարկեր հաճախորդներին	5	3,193,455	3,717,774
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	6	64,038	69,509
Հետաձգված հարկային ակտիվներ	7	19,867	25,395
Վաճառքի համար նատչելի ներդրումներ		18,258	18,258
Կանխավճար շահութահարկի գծով		18,851	13,149
Փոխառություններ		816	816
Այլ ակտիվներ		133,179	51,737
Ոչ ընթացիկ ակտիվների գծով կանխավճարներ		-	300
		<u>5,109,567</u>	<u>5,559,974</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	8	563,050	458,360
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9	325,536	710,046
Վարկեր հաճախորդներին	5	2,537,070	2,790,910
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	6	33,543	21,825
Ընթացիկ շահութահարկի գծով ակտիվներ		56,677	53,298
Ժանկետային ավանդներ	10	834,957	395,027
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	11	263,582	361,544
		<u>4,614,415</u>	<u>4,791,010</u>
Ընդամենը ակտիվներ		<u><u>9,723,982</u></u>	<u><u>10,350,984</u></u>

## Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)


Հազար դրամ		2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Ծանոթ.		
<b>Պարտավորություններ և զուտ ակտիվներ</b>			
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	12	495,967	440,062
Վարկեր և փոխառություններ	13	4,728,796	5,066,388
		<u>5,224,763</u>	<u>5,506,450</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14	179,109	159,571
Հետաձգված եկամուտ	15	95,717	207,046
Վարկեր և փոխառություններ	13	1,175,281	1,275,502
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություններ		40,969	62,637
		<u>1,491,076</u>	<u>1,704,756</u>
<b>Զուտ ակտիվներ</b>		<u>3,008,143</u>	<u>3,139,778</u>
<b>Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ</b>		<u>9,723,982</u>	<u>10,350,984</u>

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2017թ. մարտի 24-ին՝

Գագիկ Սարգսյան  
 Տնօրեն



Նվարդ Անանյան  
 Ֆինանսական ղեկավար




Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 54-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:



## Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2016թ.	2015թ.
		դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ	16	1,415,724	1,372,318
Վաճառքի ինքնարժեք	17	(961,830)	(944,129)
Համախառն շահույթ		453,894	428,189
Շնորհներից և նվիրատվություններից եկամուտ	18	514,148	672,093
Այլ եկամուտ		97,638	93,638
Իրացման ծախսեր		(128,364)	(97,746)
Վարչական ծախսեր	19	(1,171,702)	(1,440,417)
Այլ ծախսեր		(380,793)	(242,652)
Գործառնական գործունեությունից վնաս		(615,179)	(586,895)
Տոկոսային եկամուտ	20	995,675	1,041,321
Տոկոսային ծախս	20	(458,423)	(454,951)
Այլ ֆինանսական արդյունքներ	21	1,580	(6,321)
Վնաս մինչև հարկերը		(76,347)	(6,846)
Շահութահարկի զծով ծախս	22	(55,288)	(81,642)
Տարվա վնաս		(131,635)	(88,488)
Այլ համապարփակ եկամուտ		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական եկամուտ		(131,635)	(88,488)

Չուտ ակտիվների շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2016թ.	2015թ.
Տարեսկզբի մնացորդ	3,139,778	3,228,266
Տարվա վնաս	(131,635)	(88,488)
Տարեվերջի մնացորդ	3,008,143	3,139,778

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 8-ից մինչև 54-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

## Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա վնաս	(131,635)	(88,488)
<i>Ճշգրտումներ`</i>		
Մաշվածություն և անորտիզացիա	205,067	196,538
Հիմնական միջոցների օտարումից վնաս	2,791	5,337
Շնորհից եկամուտ	(514,148)	(672,093)
Շահութահարկի գծով ծախս	55,288	81,642
Տոկոսային եկամուտ	(995,675)	(1,041,321)
Տոկոսային ծախս	458,423	454,951
Կասկածելի դեբիտորական պարտքերի և վարկերի պահուստի շարժ, զուտ	266,827	209,616
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)	(1,580)	6,321
<i>Գործառնական վնաս նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները</i>	<u>(654,642)</u>	<u>(847,497)</u>
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	375,837	147,314
Պաշարների փոփոխություն	(104,690)	34,942
Հաճախորդներին տրված վարկեր, զուտ	516,711	(704,278)
Կրեդիտորական պարտքերի փոփոխություն	23,510	(20,586)
<i>Գործառնական գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) դրամական միջոցներ</i>	<u>156,726</u>	<u>(1,390,105)</u>
Ստացված նվիրատվություններ	459,643	1,062,293
Նվիրատվությունների վերադարձ	(919)	-
Վճարված տոկոսներ	(487,617)	(452,279)
Վճարված շահութահարկ	(80,509)	(105,159)
<i>Գործառնական գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ</i>	<u>47,324</u>	<u>(885,250)</u>

## Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(205,625)	(427,791)
Ստացված տոկոսային եկամուտ	935,541	919,107
Ավանդների վերադարձ/(ներդրված ավանդներ), զուտ	(103,103)	15,420
Ֆինանսական վարձակալության մարում, զուտ	(6,247)	(18,787)
Այլ ակտիվներ	(65,105)	(16,319)
Տրված փոխառություններ	-	955
Պարտատոմսերի ձեռքբերում	-	(18,258)
<i>Ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</i>	<u>555,461</u>	<u>454,327</u>
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված փոխառություններ, զուտ	(424,956)	648,922
<i>Ֆինանսավորման գործունեությունից ստացված / (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ</i>	<u>(424,956)</u>	<u>648,922</u>
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ	177,829	217,999
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	902	(4,883)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	<u>491,870</u>	<u>278,754</u>
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում (տե՛ս ծանոթագրություն 28)	<u>670,601</u>	<u>491,870</u>

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 54-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

## 1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են «Ազրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ «ՔԱՐԳ- Հիմնադրամ») և դուստր ընկերությունների (միասին՝ Խումբ)՝ 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

ՔԱՐԳ- Հիմնադրամը գյուղատնտեսական զարգացման կազմակերպություն է, որը ձևավորվել է 2004թ. սեպտեմբերի 15-ին՝ որպես հայաստանյան Հիմնադրամ: ՔԱՐԳ- Խմբի կառավարման մարմինը Հոգաբարձուների խորհուրդն է, որը բաղկացած է մասնավոր հատվածի անկախ ներկայացուցիչներից, միջազգային և տեղական հասարակական կազմակերպություններից, կրթական հաստատություններից և գյուղական համայնքների ներկայացուցիչներից: ՔԱՐԳ- Հիմնադրամի ծրագրային 5 հիմնական բաժիններն են՝ Սննդի անվտանգության բաժին, Ազրոբիզնեսի և մարքեթինգի բաժին, Գյուղական զարգացման բաժին, Ֆինանսական և վարչական կառավարման բաժին:

ՔԱՐԳ- Հիմնադրամի առաքելությունն է՝ աջակցել ֆերմերներին և ազրոբիզնեսին սննդամթերքի և հարակից ապրանքների արտադրության և իրացման ոլորտներում՝ եկամուտների ավելացման և աշխատատեղերի ստեղծման նպատակով, որը կհանգեցնի գյուղական բնակչության կայուն կենսամակարդակի ապահովմանը: Այն առաջարկում է գյուղատնտեսական զարգացման համալիր և ինտեգրված ծառայություններ, որոնք մշտապես առաջնորդվում են շուկայի թելադրանքով և ուղղված են աջակցելու ֆերմերներին, ինչպես նաև շուկայում գործունեություն ծավալող այլ անձանց՝ զարգացնելու իրենց կարողությունները, նվազեցնելու գները և բարձրացնելու արդյունավետությունը:

ՔԱՐԳ- Հիմնադրամի հիմնական գործունեությունն առնչվում է գյուղատնտեսությանն ու սննդի արդյունաբերությանը: ՔԱՐԳ- Հիմնադրամն իրականացնում է զարգացման ծրագրեր, որոնք ֆինանսավորվում են տարբեր դոնոր կազմակերպությունների կողմից: ՔԱՐԳ- Հիմնադրամի հիմնական դոնոր կազմակերպությունը Միացյալ Նահանգների Գյուղդեպարտամենտն է (այսուհետ՝ «ԱՄՆ Գ-Գ»):

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՔԱՐԳ- Հիմնադրամի դուստր ընկերությունն է ԱզրոՎիթն Բի Վի ընկերությունը, որը գտնվում է Նիդերլանդներում, և որը «ՔԱՐԳ- ԱզրոՍերվիս» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «ՔԱՐԳ- Սերվիս») և «ՔԱՐԳ- ԱզրոԿրեդիտ Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «ՔԱՐԳ- Կրեդիտ») 100% սեփականատերն է:

**ՔԱՐԳ**- Սերվիսը փակ բաժնետիրական ընկերություն է, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում, 2008 թվականին: **ՔԱՐԳ**- Սերվիսը գրավում է գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների, ինչպես նաև մթերքների ներմուծմամբ և վաճառքով, ինչպես նաև գյուղատնտեսական և մթերային ապրանքների վերամշակմամբ: **ՔԱՐԳ**- Սերվիսը նաև տրամադրում է խորհրդատվական ծառայություններ՝ հիմնականում գյուղատնտեսական արտադրանքի, տեխնոլոգիաների մշակման, դեկավարման և մարքեթինգի ոլորտներում:

**ՔԱՐԳ**- Կրեդիտը փակ բաժնետիրական ընկերություն է, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում, 2008 թվականին: **ՔԱՐԳ**- Կրեդիտը գործում է ՀՀ օրենսդրության սահմաններում և իրականացնում է իր գործունեությունը՝ համաձայն ՀՀ Կենտրոնական Բանկի 2008թ. հունիսի 27-ի թիվ 23 գրանցման վկայականի: Ընկերության հիմնական գործունեությունը վարկերի տրամադրումն է: **ՔԱՐԳ**- Կրեդիտն առաջարկում է ֆինանսական ծառայությունների ամբողջական փաթեթ գյուղատնտեսական արտադրության, վերամշակման և շուկայահանման ողջ շղթայում, որը ներառում է գործնական և բիզնեսի զարգացման վարկեր, գյուղատնտեսության զարգացման և սեզոնային վարկեր սննդի վերամշակման ձեռնարկություններին, գյուղական փոքր և միջին կազմակերպություններին և անհատ ֆերմերներին:

**ՔԱՐԳ**- Հիմնադրամի գրանցման հասցեն է՝ 1/21, 40 Ազատության փողոց, Երևան 0037, Հայաստանի Հանրապետություն:

Խմբի աշխատակիցների միջին թվաքանակը 2016թ. կազմել է 154 մարդ (2015թ.՝ 147 մարդ):

## **2 Պատրաստման հիմքերը**

### **2.1 Համապատասխանություն**

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

Ներկայումս ՖՀՄՍ չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմքերի»:*

### **2.2 Ծանաչման հիմքեր**

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով:

### 2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Խմբի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Խմբի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

### 2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 23-ում:

### 2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Խումբն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2016թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) և ՀՀՄՄԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև: Չնայած այս նոր ստանդարտները և փոփոխությունները առաջին անգամ կիրառելի են 2016թ. ընթացքում, դրանք էական ազդեցություն չեն ունեցել Խմբի տարեկան համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

### Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2016թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

ՀՀՄՄ 16 (Փոփոխություններ) «Հիմնական միջոցներ» և ՀՀՄՄ 38 (Փոփոխություններ) «Ոչ նյութական ակտիվներ»: Մաշվածության և ամորտիզացիայի ընդունելի մեթոդների պարզաբանում

Փոփոխությունները պարզաբանում են ՀՀՄՄ 16-ում և ՀՀՄՄ 38-ում առկա սկզբունքները, համաձայն որոնց հասույթն արտացոլում է այն տնտեսական օգուտների մոդելը, որոնք առաջանում են գործառնական գործունեությունից (որի մասն է կազմում ակտիվը), այլ ոչ թե այն տնտեսական օգուտները, որոնք սպառվում են ակտիվի օգտագործման միջոցով: Արդյունքում, հիմնական միջոցների մաշվածության հաշվարկի ժամանակ չի կարող օգտագործվել հասույթի վրա հիմնված մեթոդը: Այն կարելի է օգտագործել միայն ոչ

նյութական ակտիվների ամորտիզացիայի հաշվարկի ժամանակ՝ խիստ սահմանափակ հանգամանքներում:

### **Տարեկան բարեփոխումներ՝ 2012-2014թթ.**

2012-2014թթ. տարեկան բարեփոխումները մի շարք ՖՀՄՄ-ներում կատարել են որոշ աննշան փոփոխություններ: Խմբին վերաբերող փոփոխությունները ամփոփված են ստորև.

#### *ՖՀՄՄ 7 «Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ»*

Փոփոխությունները տրամադրում են հավելյալ ուղեցույց՝ օգնելու ընկերություններին բացահայտել այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում ծառայությունների պայմանագիրը համարվում է «շարունակական ներգրավվածություն»՝ ՖՀՄՄ 7-ի 42Ե-42Ը պարագրաֆների բացահայտման պահանջների կիրառման նպատակով: Նման հանգամանքները սովորաբար առաջանում են, երբ, օրինակ, ծառայությունների վճարը կախված է փոխանցված ֆինանսական ակտիվից հավաքագրված դրամական միջոցների հոսքերի չափից կամ ժամանակից, կամ երբ ֆիքսված վճարը ամբողջությամբ չի վճարվել այդ ակտիվի չիրականացման պատճառով:

### **Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից**

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից:

Դեկլարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից: Ստորև ներկայացված է տեղեկատվություն նոր ստանդարտների, փոփոխությունների և մեկնաբանությունների վերաբերյալ, որոնք նախատեսվում է, որ կիրառելի կլինեն Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար: Որոշ այլ նոր ստանդարտներ և մեկնաբանություններ թողարկվել են, սակայն չի ակնկալվում, որ դրանք Խմբի ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն կունենան:

#### *ՀՀՄՄ 12 (Փոփոխություններ) «Շահութահարկեր»*

ՀՀՄՄԽ-ը թողարկել է «Չիրացված վնասների համար հետաձգված հարկային ակտիվների ճանաչում» պարզաբանումը, որը ՀՀՄՄ 12-ում՝ «Շահութահարկեր», կատարում է որոշակի փոփոխություններ: Փոփոխությունները պարզաբանում են, թե ինչպես պետք է հաշվառել իրական արժեքով չափվող պարտքային գործիքներին վերաբերող հետաձգված հարկային ակտիվները, հատկապես այն դեպքերում, երբ շուկայական տոկոսադրույքի փոփոխությունները նվազեցնում են պարտքային գործիքի իրական արժեքը սկզբնական արժեքից ցածր մակարդակի:

Սույն փոփոխությունները պարզաբանում են հետևյալը.

- այն պարտքային գործիքների գծով չիրացված վնասները, որոնք չափվում են իրական արժեքով, իսկ հարկային առումով՝ սկզբնական արժեքով, առաջացնում են նվազեցվող ժամանակավոր տարբերություններ՝ անկախ նրանից, թե պարտքային գործիքին տիրապետողն ակնկալում է վերականգնել դրա հաշվեկշռային արժեքը՝ այն վաճառելու, թե օգտագործելու միջոցով,
- ակտիվի հաշվեկշռային արժեքը չի սահմանափակում հարկման ենթակա ապագա հավանական շահույթների գնահատումը,
- հարկման ենթակա ապագա շահույթների գնահատումները չեն ներառում նվազեցվող ժամանակավոր տարբերությունների հակադարձումից առաջացող հարկային նվազեցումները,
- ընկերությունը պետք է հաշվի առնի, արդյոք հարկային օրենսդրությունն արգելում է հարկվող շահույթների այն աղբյուրները, որոնց առումով այն կարող է նվազեցումներ կատարել նվազեցվող ժամանակավոր տարբերությունների հակադարձման մասով: Եթե հարկային օրենսդրությունում չկան այդպիսի արգելքներ, ընկերությունը գնահատում է նվազեցվող ժամանակավոր տարբերությունը բոլոր այլ նվազեցվող ժամանակավոր տարբերությունների հետ համատեղ:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2017թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և պետք է կիրառվեն հետընթաց:  
Դեկլարարության գնահատմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

**ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» (2014թ.)**

ՀՀՄՍԽ-ը թողարկել է ՖՀՄՍ 9-ը՝ «Ֆինանսական գործիքներ» (2014թ.)՝ ներկայացնելով իր ծրագրի ավարտը, ինչը պետք է փոխարինի ՀՀՄՍ 39-ին՝ «Ֆինանսական գործիքներ, ճանաչումը և չափումը»: Նոր ստանդարտն ընդարձակ փոփոխություններ է ներկայացնում ՀՀՄՍ 39-ի ուղեցույցում ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման վերաբերյալ և ներկայացնում է ֆինանսական ակտիվների արժեզրկման նոր «կանխատեսվող վարկային կորուստներ» մոդելը: ՖՀՄՍ 9-ը նաև ապահովում է նոր ուղեցույց՝ հեջի հաշվառման կիրառման վերաբերյալ:

Խմբի դեկլարարությունը դեռ պետք է գնահատի այս նոր ստանդարտի ազդեցությունը Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա: Նոր ստանդարտը պետք է կիրառվի 2018թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

**ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»**

ՖՀՄՍ 15-ը հասույթի ճանաչման նոր պահանջներ է ներկայացնում՝ փոխարինելով ՀՀՄՍ 18-ը՝ «Հասույթ», ՀՀՄՍ 11-ը՝ «Կառուցման պայմանագրեր» և հասույթի հետ կապված որոշ այլ մեկնաբանություններ: Նոր ստանդարտը սահմանում է հասույթի ճանաչման մոդել՝ հիմնված վերահսկողության վրա և լրացուցիչ ուղեցույց է տրամադրում գործող ՖՀՄՍ-



ներում մանրամասնորեն չներկայացված տարբեր ոլորտների վերաբերյալ, ներառյալ՝ ինչպես հաշվառել բազմակի պարտավորությունների կատարման, փոփոխում գնագոյացմամբ, հաճախորդներին փոխհատուցման իրավունքների, մատակարարների՝ հետզման տարբերակների պայմաններ և այլ բարդություններ պարունակող պայմանագրերը:

ՖՀՄՍ 15-ը ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Խմբի ղեկավարությունը դեռևս չի գնահատել ՖՀՄՍ 15-ի ազդեցությունը սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

#### ՖՀՄՍ 16 «Վարձակալություն»

ՖՀՄՍ 16-ում ներկայացված են վարձակալության հաշվառման նոր պահանջներ և փոփոխություններ: ՖՀՄՍ 16-ը սահմանում է, որ վարձակալները պետք է հաշվառեն վարձակալությունները «հաշվապահական հաշվեկշռում»՝ ճանաչելով «օգտագործման իրավունքը» որպես ակտիվ և վարձակալության գծով համապատասխան պարտավորությունը:

Միևնույն ժամանակ ՖՀՄՍ 16-ը՝

- փոփոխում է վարձակալության սահմանումը,
- սահմանում է ակտիվի և պարտավորության հաշվառման պահանջներ, այդ թվում՝ դրանց այնպիսի առանձնահատկությունների, ինչպիսիք են ոչ-վարձակալական տարրերը, փոփոխվող վարձակալական վճարները և արտոնյալ (օպցիոն) ժամանակաշրջանները;
- ազատման հնարավորություն է տալիս կարճաժամկետ վարձակալությունների և ցածրարժեք ակտիվների համար,
- փոփոխում է «վաճառք հետադարձ վարձակալությամբ» պայմանավորվածությունների հաշվառումը,
- մեծապես պահպանում է ՀՀՄՍ 17-ի մոտեցումը՝ վարձատուների հաշվառման մասով;
- ներկայացնում է նոր բացահայտման պահանջներ:

ՖՀՄՍ 16-ը ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Թույլատրվում է ստանդարտի վաղաժամկետ կիրառումը՝ պայմանով, որ ՖՀՄՍ 15-ը «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ», նույնպես կիրառվի: Խմբի ղեկավարությունը դեռևս չի գնահատել ՖՀՄՍ 16-ի ազդեցությունը սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

**ՖՀՄՄԿ 22 «Արտարժույթով գործարքներ և կանխավճարների դիտարկում»**

ՖՀՄՄԿ 22-ը պարզաբանում է, թե ինչ փոխարժեքով պետք է իրականացվի փոխարկումը, երբ վճարումները կատարվել կամ ստացվել են նախքան համապատասխան ակտիվը կամ եկամուտը ստանալը, կամ ծախսը կատարելը:

ՖՀՄՄԿ 22-ն անդրադառնում է այս հարցին՝ պարզաբանելով, որ համապատասխան ակտիվի, ծախսի կամ եկամտի (կամ դրանց մի մասի) սկզբնական ճանաչման փոխարժեքը որոշելիս գործարքի ամսաթիվ է համարվում այն ամսաթիվը, երբ Խումբը սկզբնապես ճանաչում է կանխավճարի վճարումից կամ ստացումից առաջացած ոչ դրամային ակտիվը կամ պարտավորությունը:

Եթե կանխավճարները վճարվել կամ ստացվել են բազմակի անգամ, Խումբը պետք է գործարքի ամսաթիվ որոշի կանխավճարի յուրաքանչյուր վճարման կամ ստացման համար:

ՖՀՄՄԿ 22-ը ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Թույլատրվում է ստանդարտի վաղաժամկետ կիրառումը:

**Տարեկան բարեփոխումներ՝ 2014-2016թթ.**

**ՖՀՄՄ 12 «Այլ կազմակերպություններում մասնակցության բացահայտում»**

Ստանդարտի շրջանակների հստակեցում:

ՖՀՄՄ 12-ը պետք է կիրառվի հետադարձ՝ ՀՀՄՄ 8-ի համաձայն, այն ուժի մեջ է մտնում 2017թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար:

**2.6 Դուստր ընկերություններ**

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված են հետևյալ դուստր ընկերությունները.

2016թ. դեկտեմբերի 31 Դուստր ընկերություն	Մասնաբաժին/ Քվեարկության իրավունք %	Գրանցման երկիր	Գործունեության ոլորտ
<i>ՔԱՐԴ հիմնադրամի դուստր ընկերություն</i>			
ԱզրոՎիժն Բի Վի	100%	Նիդերլանդներ	Կառավարում
<i>ԱզրոՎիժն Բի Վի դուստր ընկերություն</i>			
ՔԱՐԴ ԱզրոՍերվիս ՓԲԸ	100%	Հայաստանի Հանրապետություն	Գյուղատնտեսություն
ՔԱՐԴ ԱզրոԿրեդիտ ՈւՎԿ ՓԲԸ	100%	Հայաստանի Հանրապետություն	Ֆինանսական ծառայություններ

### **3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն**

#### **3.1 Համախմբման հիմքերը**

##### *Դուստր ընկերություններ*

Դուստր են հանդիսանում այն ընկերությունները, որոնք վերահսկվում են Խմբի կողմից: Վերահսկողությունն առկա է, երբ Խումբն իրավունք ունի ուղղակիորեն կամ անուղղակիորեն կառավարել ընկերության ֆինանսական և տնտեսական քաղաքականությունը՝ նրա գործունեությունից օգուտներ ստանալու նպատակով: Դուստր ընկերության ֆինանսական հաշվետվությունները ներառված են համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ սկսած վերահսկողությունը ստանձնելու ամսաթվից մինչև վերահսկողության դադարեցման ամսաթիվը:

Խմբի կողմից ձեռքբերված դուստր ընկերությունները հաշվառվում են գնման մեթոդով: Ձեռքբերման ժամանակ ձեռքբերված որոշելի ակտիվները, ինչպես նաև ստանձնած որոշելի պարտավորությունները և պայմանական պարտավորությունները սկզբնապես չափվում են ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրենց իրական արժեքով՝ անկախ չվերահսկող (փոքրամասնության) բաժնեմասի չափից:

Ձեռքբերված որոշելի ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների իրական արժեքում Խմբի բաժնեմասը գերազանցող ձեռքբերման արժեքի մեծությունը ճանաչվում է որպես գույվիլ: Եթե ձեռքբերման արժեքը փոքր է ձեռք բերված որոշելի ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների իրական արժեքում Խմբի բաժնեմասից, ապա տարբերությունը ճանաչվում է ուղղակիորեն շահույթում կամ վնասում:

Չվերահսկող (փոքրամասնության) բաժնեմասը դուստր ընկերության այն բաժնեմասն է, որը չի պատկանում Խմբին: Հաշվետու ամսաթվի դրությամբ չվերահսկվող բաժնեմասը դուստր ընկերության որոշելի ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների իրական արժեքի փոքրամասնության բաժնետերերի բաժնեմասն է, ինչպես նաև ձեռքբերման օրվանից սկսած՝ փոքրամասնության բաժինը սեփական կապիտալի շարժում: Չվերահսկվող բաժնեմասը ներկայացվում է սեփական կապիտալում:

Փոքրամասնությանը վերագրվող վնասները դուստր ընկերության սեփական կապիտալում չեն գերազանցում չվերահսկվող բաժնեմասը, եթե փոքրամասնության բաժնետերերը պարտավորված չեն իրենց վրա վերցնել կորուստները: Բոլոր նմանատիպ կորուստները բաշխվում են Խմբին:

##### *Համախմբման արդյունքում չներառված գործարքներ*

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ամբողջովին բացառվում են ներխմբային հաշիվների մնացորդները և գործարքները, ինչպես նաև ներխմբային գործարքներից առաջացած բոլոր չիրացված օգուտները:

### 3.2 Արտարժույթ

#### *Արտարժույթով գործարքներ*

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը. 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 483.94 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 512.20 ՀՀ դրամ (2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 483.75 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 528.69 ՀՀ դրամ):

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

### 3.3 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած հետագա կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հողը և կառուցման ընթացքում գտնվող շինարարական աշխատանքները չեն մաշվում: Մնացած հիմնական միջոցների մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	- 20 տարի
Մեքենա և սարքավորումներ	- 5 տարի
Տրանսպորտային միջոցներ	- 5 տարի
Արտադրատնտեսական գույք	- 5 տարի:
Այլ	- 5 տարի

### 3.4 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Խմբի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 10 տարի համակարգչային ծրագրի համար:

### 3.5 Վարձակալված ակտիվներ

*Ֆինանսական վարձակալություն – Խումբը որպես վարձատու*

Ֆինանսական վարձակալության սկզբում Խումբը ֆինանսական վարձակալությամբ տրամադրած ակտիվները հաշվառում է ներդրումների զուտ գումարով: Այս գործառնությունները ներկայացվում են որպես հաճախորդներին տրված վարկեր և կանխավճարներ: Ֆինանսական եկամուտը ճանաչվում է վարձակալության ընթացքում այնպես, որ ապահովի անփոփոխ պարբերական դրույք վարձակալության շրջանակներում չմարված զուտ ներդրումների նկատմամբ: Սկզբնական ուղղակի ծախսերը ներառվում են ստացվելիք գումարների սկզբնական ճանաչման ժամանակ:

Երբ վարձակալման պայմանագրերի դադարեցման արդյունքում Խմբի տիրապետության տակ է անցնում գրավի առարկան, այդ ակտիվները չափվում են իրացման զուտ արժեքի և պատմական ամորտիզացված արժեքների նվազագույնով:

*Գործառնական վարձակալություն – Խումբը որպես վարձակալ*

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ գծային հիմունքով, վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

### 3.6 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով միջին կշռված մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

### 3.7 Ֆինանսական գործիքներ

#### *Ճանաչում, սկզբնական չափում և ապաճանաչում*

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

#### *Ֆինանսական ակտիվների դասակարգումը և հետագա չափումը*

Հետագա չափումն իրականացնելու համար ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների սկզբնական ճանաչման ժամանակ բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- փոխառություններ և դեբիտորական պարտքեր,
- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, թե այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Խմբի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 24.2-ում:

Ընդհանուր առմամբ, Խմբի բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ներկայացվում են «Տոկոսային ծախս», «Տոկոսային եկամուտ» կամ «Այլ ֆինանսական արդյունքներ» հոդվածներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է «Այլ ծախսեր» հոդվածում:

*i. Փոխառություններ և դեբիտորական պարտքեր*

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք չեն գնանշվում ակտիվ շուկայում և ներառում են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, ինչպես նաև մնացորդները դրամարկղում և բանկերում:

*Վարկեր հաճախորդներին*

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ, երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս՝ շուկայականից ցածր դրույքներով, ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում: Այնուհետև վարկերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերը հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

*Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր*

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Խումբը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիչ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարն ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

Գոնորներից ակնկալվող շնորհները համարվում են որպես դեբիտորական պարտք միայն այն դեպքում, երբ դեկավարության գնահատմամբ հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են հիմնավոր հավաստիացումներ, որ դրանք ստացվելու են: Ֆինանսական հաշվետվություններում դրանք հաշվառվում են որպես ստացվելիք նվիրատվություններ (ներառված են «Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր» հոդվածում):

*Մնացորդներ դրամարկղում և բանկերում*

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

*ii. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ներդրումներ*

Վաճառքի համար մատչելի ներդրումները պարտքային, ինչպես նաև կապիտալի գործիքներում կատարված այն ներդրումներն են, որոնք, Խումբը մտադիր է պահել անորոշ ժամկետով, և որոնք կարող են վաճառվել իրացվելիության կարիքների բավարարման համար, ինչպես նաև տոկոսադրույքներում, փոխարժեքներում կամ բաժնետոմսերի գներում փոփոխությունների դեպքում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները նախնական ճանաչումից հետո հաշվառվում են իրական արժեքով: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից առաջացած օգուտն ու վնասը վերագրվում է սեփական կապիտալին մինչև ֆինանսական ակտիվի օտարումը կամ արժեզրկումը, որի դեպքում կապիտալում ճանաչված օգուտը կամ վնասը վերաձևակերպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ամեն դեպքում, տոկոսները հաշվարկվում են արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վաճառքի համար մատչելի կապիտալի գործիքների գծով շահաբաժինները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գրանցվում են այն ժամանակ, երբ Խումբը իրավունք է ձեռք բերում ստանալու այդ շահաբաժինները:

Ակտիվ ֆինանսական շուկաներում գործող ֆինանսական ակտիվի իրական արժեքը հաշվետու ամսաթվին բորսայի փակման պահին այդ ակտիվի գծով գնանշվող գինն է: Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, ապա գործիքի իրական արժեքը որոշվում է գնային մոդելների կամ զեղչված դրամական հոսքերի տեխնիկայի միջոցով: Հակառակ դեպքում ներդրումները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով արժեզրկումից կորուստները:



*iii. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ*

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով, ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են և ներառում են առևտրային բանկերում ավանդները: Ներդրումները դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, եթե Խմբի ղեկավարությունը մտադրված է պահել դրանք մինչև դրանց մարման ժամկետը:

Ավանդները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ի լրումն, եթե առկա է ավանդների արժեզրկման օբյեկտիվ ապացույց, ֆինանսական ակտիվը չափվում է գնահատված դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքով: Ավանդների հաշվեկշռային արժեքի ցանկացած փոփոխություն ճանաչվում է շահույթում կամ վնասում:

*Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և հետագա չափումը*

Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները և առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Խմբի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 24.2-ում:

*i. Վարկեր և փոխառություններ*

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

*ii. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր*

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

### 3.8 Արժեզրկում

#### *Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում*

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի գուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորուստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

#### *Ֆինանսական ակտիվների արժեզրկում*

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է, և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով շահույթում կամ վնասում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Ինչ վերաբերում է վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի արժեթղթերին, արժեզրկումից հետո իրական արժեքի աճն ուղղակիորեն ճանաչվում է սեփական կապիտալում:

### 3.9 Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Խումբը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Խմբի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Շնորհը, որը հատկացվում է Խմբին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

Ստացված շնորհների գծով ամբողջ եկամուտը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հետաձգված եկամուտ, երբ այն դառնում է ստացման ենթակա, այսինքն՝ այն պահին, երբ Հիմնադրամը ստորագրում է իրավական պայմանագիր: Հետաձգված եկամուտը փոխանցվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն՝ շնորհին կից պայմանների իրականացմանը զուգընթաց: Ընդ որում, եթե հետաձգված եկամտի գումարը գերազանցում է Հիմնադրամի կողմից շնորհին կից պայմանների իրականացման համար պահանջվող գումարը, գերազանցող մասը նվազեցվում է հետաձգված եկամտի մնացորդից և համապատասխան դոնորի գծով դեբիտորական պարտքի մնացորդից: Այս ճշգրտման գումարը չի արտացոլվում գործունեության մասին հաշվետվությունում:

### 3.10 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Խումբն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

### 3.11 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գույվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են դուստր ընկերություններում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների ու համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, որտեղ Խումբն ի վիճակի է վերահսկելու ժամանակավոր տարբերության հակադարձումը և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում: Նմանատիպ ներդրումների և մասնակցությունների հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերություններից առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է հարկվող շահույթի առկա լինելը, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը, և որը կմարվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Խումբը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Խումբը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Խումբը մտադիր է գուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

ՀՀ հարկային օրենսդրության փոփոխության արդյունքում հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հարկային հաշվառման սկզբունքներում կատարվել են էական փոփոխություններ: 2014թ. հունվարի 1-ից հետո ձեռք բերված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածության և ամորտիզացիայի տարեկան մեծությունը հաշվարկվում է ըստ ոչ ընթացիկ ակտիվների խմբերի՝ որպես տվյալ խմբի՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ավարտին հաշվեկշռային (մնացորդային) արժեքի և տվյալ խմբի համար սահմանված՝ ամորտիզացիոն տարեկան տոկոսադրույթի արտադրյալ:

### 3.12 Հասույթի ճանաչում

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Խմբի կողմից տրամադրված ցանկացած առևտրական զեղչերը և իջեցումների գումարները:

#### *Ապրանքների վաճառք*

Ապրանքների վաճառքից ստացված հասույթը ճանաչվում է, երբ բավարարվում են հետևյալ բոլոր պայմանները.

- Խումբը գնորդին է փոխանցել ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը,
- Խումբը չի պահպանում ո՛չ կառավարման շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից, ո՛չ էլ վաճառված ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկողություն,
- հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,
- հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Խումբ,
- հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները:

Ապրանքները վաճառվում են մեծածախ, մանրածախ վաճառքի, ինչպես նաև գործակալների միջոցով: Ապրանքների վաճառքից հասույթը հիմնականում առաջանում է գյուղատնտեսական ապրանքների և մեքենաների վաճառքից:

#### *Մեծածախ վաճառք և վաճառք գործակալների միջոցով*

Հասույթը ճանաչվում է, երբ ապրանքները դուրս են բերվում պահեստից, և համապատասխան հաշիվ ապրանքնագիր է դուրս գրվում:

### *Մանրածախ վաճառք*

Ապրանքների մանրածախ վաճառքից հասույթը ճանաչվում է վաճառքի գործարքի պահին:

### *Ծառայությունների մատուցում*

Ծառայությունների մատուցումից ստացված հասույթը ճանաչվում է, երբ փաստացի մատուցված ծառայություններն ընդունվում են հաճախորդի կողմից՝ հաշվի առնելով որոշակի գնահատված գործարքի ձևավորման աստիճանը, որը հաշվարկվում է որպես փաստացի մատուցվող ծառայության մաս:

### *Շնորհներից և նվիրատվություններից եկամուտ*

Եկամտի ճանաչման քաղաքականությունը ներկայացված է ծանոթագրություն 3.9-ում:

### *Տոկոսային եկամուտ*

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը բոլոր տոկոսաբեր ֆինանսական գործիքների համար՝ բացառությամբ առևտրային նպատակներով պահվող կամ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող գործիքների, համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես «տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս»՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

### *Կոմիսիոն և այլ եկամուտ*

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Վարձավճարները, այլ եկամուտները և ծախսերը հինականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում: Ներդրումային պորտֆելի, այլ կառավարչական և խորհրդատվական ծառայությունների գծով վճարները ճանաչվում են պայմանագրային պայմաններին համապատասխան: Ակտիվների կառավարման գծով վճարները ճանաչվում են ծառայությունների մատուցման ժամանակաշրջանում: Նույն սկզբունքն է կիրառվում կարողությունների կառավարման, ֆինանսական պլանավորման և ակտիվների պահպանման ծառայությունների դեպքում, որոնք ենթադրում են ծառայությունների մատուցման երկար ժամկետ:

### *Ջուտ առևտրային եկամուտ*

Ջուտ առևտրային եկամուտը ներառում է արտարժույթային տարբերություններից գոյացող բոլոր եկամուտները և ծախսերը և ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ համապատասխան ծառայությունն արդեն մատուցված է:

#### 4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Հող, շենքեր և շինություն- ներ	Մեքենա և սարքավոր- ումներ	Տրանսպոր- տային միջոցներ	Արտադրա- տնտեսական գույք և այլ	Անավարտ շինարա- րություն	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>						
2015թ. հունվարի 1-ի դրությամբ	1,118,184	180,346	245,339	145,734	220,736	1,910,339
Ավելացում	23,940	74,439	84,188	38,873	236,903	458,343
Օտարում	-	(17,884)	(47,929)	(13,405)	-	(79,218)
Ներքին շարժ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	379,224	-	-	-	(379,224)	-
	1,521,348	236,901	281,598	171,202	78,415	2,289,464
Ավելացում	2,492	31,980	-	18,467	143,971	196,910
Օտարում	-	(16,091)	-	(2,356)	-	(18,447)
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,523,840	252,790	281,598	187,313	222,386	2,467,927
<i>Կուտակված մաշվածություն</i>						
2015թ. հունվարի 1-ի դրությամբ	220,324	104,717	127,888	61,557	-	514,486
Տարվա հաշվարկ Օտարման հետևանքով դուրսգրում	80,646	44,734	40,964	27,891	-	194,235
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	(15,163)	(47,929)	(10,840)	-	(73,932)
	300,970	134,288	120,923	78,608	-	634,789
Տարվա հաշվարկ Օտարման հետևանքով դուրսգրում	95,895	47,887	36,682	22,325	-	202,789
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	(14,094)	-	(1,562)	-	(15,656)
	396,865	168,081	157,605	99,371	-	821,922
<i>Հաշվեկշռային արժեք</i>						
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,220,378	102,613	160,675	92,594	78,415	1,654,675
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,126,975	84,709	123,993	87,942	222,386	1,646,005

Հաշվետու ամսաթվի դրությամբ խումբը գրավադրված հիմնական միջոցներ չունի:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջությամբ մաշված հիմնական միջոցների սկզբնական արժեքը կազմում է 196,331 հազար դրամ (2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 138,986 հազար դրամ):

Մաշվածության գծով ծախսը բաշխվել է հետևյալ կերպ՝

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վարչական ծախսեր	189,864	180,395
Իրացման ծախսեր	12,925	13,840
	<u>202,789</u>	<u>194,235</u>

**5 Վարկեր հաճախորդներին**

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆիզիկական անձինք	4,496,941	4,712,667
Մասնավոր ձեռնարկություններ	789,528	1,110,015
Անհատ ձեռներեցներ	1,088,322	1,068,820
	<u>6,374,791</u>	<u>6,891,502</u>
Վարկերի գծով արժեզրկումից պահուստ	(644,266)	(382,818)
	<u>5,730,525</u>	<u>6,508,684</u>

Վարկերի գծով արժեզրկումից պահուստի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	Ֆիզիկական անձինք	Մասնավոր ձեռնարկու- թյուններ	Անհատ ձեռներեցներ	Ընդամենը
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	283,848	41,472	57,498	382,818
Տարվա հաշվարկ	262,787	(10,912)	30,400	282,275
Դուրսգրում	(15,694)	(1,610)	(3,523)	(20,827)
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>530,941</u>	<u>28,950</u>	<u>84,375</u>	<u>644,266</u>
Անհատական արժեզրկում	387,746	1,364	47,678	436,788
Խմբային արժեզրկում	143,195	27,586	36,697	207,478
	<u>530,941</u>	<u>28,950</u>	<u>84,375</u>	<u>644,266</u>
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումար մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստներով զտելը	<u>387,746</u>	<u>1,364</u>	<u>47,678</u>	<u>436,788</u>



Հազար դրամ	Ֆիզիկական անձինք	Մասնավոր ձեռնարկու- թյուններ	Անհատ ձեռներեցներ	Ընդամենը
2015թ. հունվարի 1-ի դրությամբ	137,068	16,815	23,121	177,004
Տարվա հաշվարկ	143,878	24,161	32,961	201,000
Վերականգնված գումարներ	2,902	496	1,416	4,814
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>283,848</u>	<u>41,472</u>	<u>57,498</u>	<u>382,818</u>
Անհատական արժեզրկում	132,611	5,006	22,943	160,560
խմբային արժեզրկում	<u>151,237</u>	<u>36,466</u>	<u>34,555</u>	<u>222,258</u>
	<u>283,848</u>	<u>41,472</u>	<u>57,498</u>	<u>382,818</u>
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումար մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստներով գտելը	<u>132,611</u>	<u>5,006</u>	<u>22,943</u>	<u>160,560</u>

Վարկերի արժեզրկման գնահատման հիմնական հատկանիշներն են՝ մայր գումարի կամ տոկոսների վճարումների 90 օրից ավել ուշացումները, վարկառուների դրամական հոսքերի հետ կապված դժվարությունները, վարկային վարկանիշերի նվազումները, պայմանագրերի նախնական պայմանների խախտումները: Խումբն արժեզրկման գնահատումը կատարում է անհատապես և խմբային եղանակով:

*Արժեզրկման անհատական գնահատում*

Խումբը որոշում է յուրաքանչյուր անհատապես նշանակալի վարկի համապատասխան պահուստի չափն անհատական հիմքով: Պահուստի գումարի որոշման ժամանակ հաշվի առնվող գործոններից են՝ վարկառուի բիզնես ծրագրի վստահելիությունը, ֆինանսական դժվարությունները հաղթահարելու կարողությունը, ծրագրված հատույթները և սպասվող շահաբաժինների վճարումներն անվճարունակության դեպքում, այլ ֆինանսական օգնության հնարավորությունը, գրավի իրացվելի արժեքը, սպասվող դրամական հոսքերի ժամկետները: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե չկանխատեսված հանգամանքները չեն պահանջում հատուկ ուշադրություն:

*Արժեզրկման խմբային գնահատում*

Խմբային գնահատումը կատարվում է ոչ նշանակալի վարկերի գծով (ներառյալ՝ հիփոթեքները և չապահովված սպառողական վարկերը), ինչպես նաև անհատապես նշանակալի վարկերի գծով, որոնց համար դեռ չկան արժեզրկման ակնհայտ հատկանիշներ: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսվա դրությամբ՝ դասակարգված յուրաքանչյուր խմբի համար առանձին:

Խմբային գնահատումը հաշվի է առնում այն արժեզրկման գումարը, որը հնարավոր է առաջանա պորտֆելում, նույնիսկ եթե անհատական գնահատման մեջ արժեզրկման օբյեկտիվ վկայություն չկա: Արժեզրկման կորուստները գնահատվում են՝ հաշվի առնելով հետևյալ տեղեկատվությունը՝ պորտֆելում կորուստների պատմությունը, ընթացիկ տնտեսական իրավիճակը, կորուստն առաջանալու և անհատապես բացահայտվելու մոտավոր ժամկետը, արժեզրկման դեպքում սպասվող վճարումները: Ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների արժեզրկման գնահատումը և պահուստավորումն իրականացվում է նույն կերպ, ինչ վարկերինը:

Հաճախորդներին տրամադրված զուտ վարկերի տեղաբաշխումը ոչ ընթացիկի և ընթացիկի ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ոչ ընթացիկ</i>		
Ֆիզիկական անձինք	2,128,993	2,542,353
Մասնավոր ձեռնարկություններ	413,906	598,822
Անհատ ձեռներեցներ	650,556	576,599
	<u>3,193,455</u>	<u>3,717,774</u>
<i>Ընթացիկ</i>		
Ֆիզիկական անձինք	1,814,748	1,787,496
Մասնավոր ձեռնարկություններ	369,972	511,193
Անհատ ձեռներեցներ	352,350	492,221
	<u>2,537,070</u>	<u>2,790,910</u>
	<u>5,730,525</u>	<u>6,508,684</u>

Հաճախորդներին տրամադրվող վարկերն ըստ տնտեսական ճյուղերի հետևյալն են՝

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մրգի և բանջարեղենի արտադրություն	3,227,565	3,384,452
Անասնապահություն	1,492,146	1,462,921
Առևտուր	685,265	751,707
Կաթի վերամշակում	364,047	235,455
Մսի արտադրություն	2,477	408,267
Ձկնաբուծություն	65,235	80,511
Գինու և կոնյակի արտադրություն	67,109	60,580
Այլ	470,947	507,609
Վարկերի գծով արժեզրկումից պահուստ	(644,266)	(382,818)
	<u>5,730,525</u>	<u>6,508,684</u>

*Հարժեզրկված, ոչ ժամկետանց վարկեր հաճախորդներին*

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է հարժեզրկված և ոչ ժամկետանց վարկերի որակը՝ հիմնված կորուստների պատմության վրա:

Հազար դրամ	2016թ.	2015թ.
Ձկնաբուծություն	3.5%	3.3%
Մրգի և բանջարեղենի արտադրություն	3.5%	3.3%
Կաթի արտադրություն	3.5%	3.3%
Կաթի վերամշակում	3.5%	3.3%
Մսի արտադրություն	3.5%	3.3%
Առևտուր	3.5%	3.3%
Գինու և կոնյակի արտադրություն	3.5%	3.3%
Այլ	3.5%	3.3%

*Ժամկետանց, բայց հարժեզրկված վարկեր*

Ժամկետանց են համարվում այն վարկերը և կանխավճարները, որոնց գծով առկա են մի քանի օրյա չվճարումներ: Ժամկետանց վարկերի հիմնական մասն արժեզրկված չէ: Ժամկետանց, բայց հարժեզրկված վարկերի ժամկետանց օրերի վերլուծությունն ըստ դասերի ներկայացվում է հետևյալ աղյուսակում.

2016թ.

Հազար դրամ	Մինչև 30 օր	31-90 օր	91 օրից ավել	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր				
Վարկեր ֆիզիկական անձանց	102,975	54,189	112,291	269,455
Վարկեր իրավաբանական կազմակերպություններին	-	33,925	-	33,925
Վարկեր ֆիզիկական անձանց- ծեռներեցներին	8,514	-	11,169	19,683
	<u>111,489</u>	<u>88,114</u>	<u>123,460</u>	<u>323,063</u>

2015թ.

Հազար դրամ	Մինչև 30 օր	31-90 օր	91 օրից ավել	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր				
Վարկեր ֆիզիկական անձանց	101,642	125,167	134,670	361,479
Վարկեր իրավաբանական կազմակերպություններին	31,733	13,113	8,259	53,105
Վարկեր ֆիզիկական անձանց- ծեռներեցներին	57,308	-	-	57,308
	<u>190,683</u>	<u>138,280</u>	<u>142,929</u>	<u>471,892</u>

**Վարկային պորտֆելի (համախառն) վերլուծությունն ըստ ապահովվածության ներկայացված է ստորև.**

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Անշարժ գույք	3,847,337	4,138,072
Հիմնական միջոցներ	412,989	799,103
Չապահովված վարկեր/երաշխիքներ	2,114,465	1,954,327
Ընդամենը վարկեր և կանխավճարներ հաճախորդներին (համախառն)	<u>6,374,791</u>	<u>6,891,502</u>

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն, որպես անհատապես արժեզրկված:

Տե՛ս ծանոթագրություն 25 արժույթի համար, որտեղ ներկայացված են հաճախորդներին տրամադրվող վարկերը:

**6 Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր**

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆիզիկական անձինք	69,893	39,544
Մասնավոր ձեռնարկություններ	27,688	51,790
	<u>97,581</u>	<u>91,334</u>

Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերը ներկայացված են ստորև.

Հազար դրամ	Նվազագույն վարձավճարներ	
	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մեկ տարվա ընթացքում		
Վարձավճարներ	33,256	21,287
Չվաստակած ֆինանսական եկամուտ	287	538
	<u>33,543</u>	<u>21,825</u>
Երկրորդից հինգերորդ տարիների ընթացքում		
Վարձավճարներ	61,482	41,128
Չվաստակած ֆինանսական եկամուտ	432	230
	<u>61,914</u>	<u>41,358</u>
Հինգ տարուց ավել		
Վարձավճարներ	2,121	28,111
Չվաստակած ֆինանսական եկամուտ	3	40
	<u>2,124</u>	<u>28,151</u>
Զուտ ներկա արժեք	<u>97,581</u>	<u>91,334</u>

Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերն ըստ տնտեսական ճյուղերի հետևյալն են.

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մրգեր և բանջարեղեններ	59,765	28,447
Գինու արտադրություն	-	12,391
Կաթի վերամշակում	1,860	8,726
Առևտուր	66	-
Մսի արտադրություն	<u>35,890</u>	<u>41,770</u>
	<u>97,581</u>	<u>91,334</u>

Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերն ապահովված չեն գրավով:

## 7 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2016թ.	2015թ.
Տարեսկզբի մնացորդ	25,395	19,501
ճանաչված շահույթում կամ վնասում (տե՛ս ծանոթագրություն 22)	(5,528)	5,894
Տարեվերջի մնացորդ	<u>19,867</u>	<u>25,395</u>

2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված		
	2016թ. հունվարի 1		2016թ. դեկտեմբերի 31
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	703	1,436	2,139
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	5,570	2,246	7,816
Պաշարներ	1,540	(638)	902
Վարկեր հաճախորդներին	18,956	(7,537)	11,419
Հիմնական միջոցներ	-	170	170
	<u>26,769</u>	<u>(4,323)</u>	<u>22,446</u>
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>			
Ժամկետային ավանդներ	759	385	1,144
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	459	459
Հիմնական միջոցներ	615	361	976
	<u>1,374</u>	<u>1,205</u>	<u>2,579</u>
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	<u>25,395</u>	<u>(5,528)</u>	<u>19,867</u>

2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված		
	2015թ. հունվարի 1		2015թ. դեկտեմբերի 31
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	303	400	703
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	5,095	475	5,570
Պաշարներ	2,202	(662)	1,540
Վարկեր հաճախորդներին	12,714	6,242	18,956
	<u>20,314</u>	<u>6,455</u>	<u>26,769</u>
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>			
Ժամկետային ավանդներ	454	305	759
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	200	(200)	-
Հիմնական միջոցներ	159	456	615
	<u>813</u>	<u>561</u>	<u>1,374</u>
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	<u>19,501</u>	<u>5,894</u>	<u>25,395</u>

## 8 Պաշարներ

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վերավաճառքի համար նախատեսված ապրանքներ	455,118	398,579
Դրամաշնորհային պայմանագրի շրջանակներում տրամադրվող ապրանքներ	102,338	52,197
Հումք	5,594	7,374
Անավարտ արտադրանք	-	210
	<u>563,050</u>	<u>458,360</u>

Տարվա ընթացքում ծախս ճանաչված պաշարների գումարը կազմում է 858,315 հազար դրամ (2015թ.՝ 895,579 հազար դրամ), որը ներառում է պաշարների արժեզրկումը մինչև իրացման գուտ արժեք՝ 7,393 հազար դրամ (2015թ.՝ 3,083 հազար դրամ) և նվազեցվում է 2,714 հազար դրամով, որն իրենից ներկայացնում է նախկինում արժեքի իջեցման հակադարձում (2015թ.՝ 8,707 հազար դրամ):

34,315 հազար դրամ հաշվեկշռային արժեքով պահեստամասերի գծով, որոնք ներառված են «վերավաճառքի համար նախատեսված ապրանքներ» հոդվածում, որևէ շարժ չի եղել 2016թ.-ի ընթացքում, սակայն դրանք չեն արժեզրկվել, քանի որ ակնկալվում է, որ այդ պահեստամասերը կփոխհատուցվեն ավելի քան տասներկու ամսվա ընթացքում (2015թ.՝ 26,601 հազար դրամ):

2016թ. դեկտեմբերի 31-ի և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի պաշարները գրավադրվել են՝ բանկային վարկերն ու վարկային գիծն ապահովելու նպատակով (տես նաև Ծանոթագրություն 13):

## 9 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	232,184	432,099
Կասկածելի դեբիտորական պարտքերի գծով պահուստ	(10,696)	(5,317)
Զուտ առևտրային դեբիտորական պարտքեր	<u>221,488</u>	<u>426,782</u>
Ստացվելիք նվիրատվություններ	2,406	158,526
Տրված կանխավճարներ	71,316	103,882
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	8,258	9,782
Այլ	<u>22,068</u>	<u>11,074</u>
	<u>325,536</u>	<u>710,046</u>

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի գուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Ապրանքների վաճառքից և ծառայությունների մատուցումից առաջացած առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է 60 օր (2015թ.՝ 115 օր): Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Խումբը լրիվ

պահուստավորում է բոլոր այն առևտրային դեբիտորական պարտքերը, որոնց մարման ժամկետից անցել է ավելի քան 365 օր, քանի որ, հիմնվելով անցյալի փորձի վրա, մարման ժամկետը 365 օրով գերազանցելու դեպքում առևտրային դեբիտորական պարտքերը համարվում են անհավաքագրելի:

Ստացվելիք նվիրատվությունները ներկայացված են ստորև.

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱՄՆ Գյուղդեպարտամենտ (ԱՄՆ ԳԴ)	-	59,943
Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն	-	98,010
Բնության Համաշխարհային Հիմնադրամ (ԲՀՀ)	1,800	-
Հելվետոս Շվեյցարական Համագործակցություն	606	573
	<u>2,406</u>	<u>158,526</u>

Գեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

Կասկածելի դեբիտորական պարտքերի գծով պահուստի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2016թ.	2015թ.
Տարեսկզբի մնացորդ	5,317	1,515
Պահուստի հակադարձում (ներառվել է այլ եկամուտներում)	10,715	(694)
Տարվա ընթացքում պահուստի աճ (ներառվել է այլ ծախսերում)	(5,336)	4,496
Տարեվերջի մնացորդ	<u>10,696</u>	<u>5,317</u>

Առևտրային դեբիտորական պարտքի հավաքագրելիությունը որոշելիս հաշվի է առնվում դեբիտորի պարտքի մարման ժամանակացույցի ցանկացած փոփոխություն՝ սկսած պարտքի առաջացման պահից մինչև հաշվետու ամսաթիվը: Հավաքագրելիության ռիսկի կենտրոնացումը սահմանափակ է՝ ելնելով հաճախորդների շրջանակների մեծությունից և կապակցված չլինելու հանգամանքից: Հետևաբար, դեկավարությունը հավատացած է, որ ստեղծված կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից գատ լրացուցիչ պահուստ չի պահանջվում:

Տե՛ս ծանոթագրություն 25-ը՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

## 10 Ժամկետային ավանդներ

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպություններում ներդրված ավանդների գումարները ներդրվել են երեք առևտրային բանկերում (2015թ.՝ երկու առևտրային բանկերում):

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 243,394 հազար դրամ (2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 163,000 հազար դրամ) ավանդները գրավադրվել են բանկերից ստացված վարկերի դիմաց:



## 11 Դրամական միջոցներ և համարժեքներ

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	940	633
Բանկային հաշիվներ	262,642	360,911
	<u>263,582</u>	<u>361,544</u>

## 12 Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2016թ.	2015թ.
Տարեսկզբի մնացորդ	440,062	236,876
Ավելացում (տե՛ս ծանոթագրություն 15)	100,124	241,945
Եկամտի ճանաչում (տե՛ս ծանոթագրություն 18)	(44,219)	(38,759)
Տարեվերջի մնացորդ	<u>495,967</u>	<u>440,062</u>

## 13 Վարկեր և փոխառություններ

Հազար դրամ	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր բանկերից	40,526	40,000	-	-
Փոխառություններ միջազգային ֆինանսական հաստատություններից	968,852	957,705	4,642,917	5,066,388
Այլ փոխառություններ	165,484	275,237	85,879	-
Վարկային գիծ	419	2,560	-	-
	<u>1,175,281</u>	<u>1,275,502</u>	<u>4,728,796</u>	<u>5,066,388</u>

Ֆինանսական հաստատություններից ստացված վարկերն ունեն տատանվող և հաստատուն տոկոսադրույքներ:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաստատություններից ստացված վարկերի միջին արդյունավետ տոկոսադրույքը կազմում է. ՀՀ դրամով վարկերի համար՝ 7.29% (2015թ.՝ 7.75%) և ԱՄՆ դոլարով վարկերի համար՝ 4.07% (2015թ.՝ 4.07%):

Հաշվետու ժամականաշրջանում Խումբը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ՝ կապված իր պարտավորությունների հետ:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 243,394 հազար դրամ (2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 163,000 հազար դրամ) ավանդները գրավադրվել են բանկերից ստացված վարկերի դիմաց:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը բանկային վարկի և վարկային գծի դիմաց գրավադրել է նաև պաշարներ (տես ծանոթագրություն 8):

#### 14 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	82,814	82,002
Ստացված կանխավճարներ	19,571	10,584
Փոխհատուցումների աշխատակիցներից	37,015	35,324
Վճարվելիք հարկեր և տուրքեր	9,864	9,547
Այլ	29,845	22,114
	<u>179,109</u>	<u>159,571</u>

Ապրանքների ձեռքբերման գծով առաջացած պարտավորությունների մարման միջին տևողությունը կազմում է 31 օր (2015թ.՝ 31 օր): Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Խումբն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

#### 15 Հետաձգված եկամուտ

	2016թ.	2015թ.
Տարեսկզբի մնացորդ	207,046	20,032
Ավելացում	453,268	1,062,293
Վերադարձված գումար	(919)	-
Փոխանցում ակտիվներին վերաբերող շնորհի (տես ծանոթագրություն 12)	(93,749)	(241,945)
Շնորհների ճանաչված որպես եկամուտ (տես ծանոթագրություն 18)	(469,929)	(633,334)
Տարեվերջի մնացորդ	<u>95,717</u>	<u>207,046</u>

Ավելացումներն ըստ աղբյուրների ներկայացված են ստորև.

Հազար դրամ	2016թ.	2015թ.
Ավստրիական Ջարգացման Գործակալություն	-	204,660
Սի Այ Էս Փի	10,452	3,694
Հելվետաս Շվեյցարական Համագործակցություն	24,218	6,298
Էն Յու Էֆ Էֆ Այ Սի	3,351	704
Էս Դի Սի	175,310	116,424
ԱՄՆ ՍԶԳ	140,225	297,494
ԱՄՆ ԳԴ	97,912	395,964
Բնության Համաշխարհային Հիմնադրամի Հայկական Մասնաճյուղ	1,800	32,094
Այլ	-	4,961
	<u>453,268</u>	<u>1,062,293</u>

## 16 Հասույթ

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ապրանքների վաճառքից	955,289	886,355
Ծառայությունների մատուցումից	460,435	485,963
	<u>1,415,724</u>	<u>1,372,318</u>

## 17 Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վաճառված ապրանքի ինքնարժեք	725,198	713,027
Մատուցված ծառայությունների ինքնարժեք	236,632	231,102
	<u>961,830</u>	<u>944,129</u>

## 18 Շնորհներից և նվիրատվություններից եկամուտ

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հետաձգված եկամտից (տե՛ս ծանոթագրություն 15)	469,929	633,334
Ակտիվներին վերաբերող շնորհներից (տե՛ս ծանոթագրություն 12)	44,219	38,759
	<u>514,148</u>	<u>672,093</u>

## 19 Վարչական ծախսեր

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխհատուցում աշխատակիցներին	490,599	562,847
Օգտագործված նյութերի արժեք	73,470	132,909
Ներկայացուցչական ծախսեր և գործուղումներ	36,647	46,835
Մաշվածություն և ամորտիզացիա	192,143	183,057
Ծրագրային ծախսեր՝ ֆինանսավորված շնորհներից	128,159	301,537
Մասնագիտական ծառայություններ	24,789	20,752
Դասընթացներ	20,912	16,465
Բանկային և ապահովագրության ծախսեր	18,000	26,227
Վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծախսեր	33,250	18,735
Այլ	<u>153,733</u>	<u>131,053</u>
	<u>1,171,702</u>	<u>1,440,417</u>

## 20 Տոկոսային եկամուտ և ծախսեր

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխառությունների և վարկերի գծով տոկոսային ծախսեր	(458,423)	(454,951)
Ընդամենը տոկոսային ծախսեր	(458,423)	(454,951)
Ավանդից տոկոսային եկամուտ	88,331	53,000
Հաճախորդներին տրամադրված վարկերից և կանխավճարներից տոկոսային եկամուտ	894,806	974,900
Ֆինանսական վարձակալության գծով տոկոսային եկամուտ	12,538	13,421
Ընդամենը տոկոսային եկամուտ	995,675	1,041,321
Զուտ տոկոսային եկամուտ	537,252	586,370

## 21 Այլ ֆինանսական հոդվածներ

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխարժեքային տարբերությունից օգուտ`		
Վարկեր և փոխառություններ	(2,806)	(10,609)
Ֆինանսական պարտավորություններ` չափվող ամորտիզացված արժեքով	4,386	4,288
	1,580	(6,321)

## 22 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	49,000	87,536
Նախորդ տարվա ընթացիկ հարկի ճշտում	760	-
Հետաձգված հարկ (տես ծանոթագրություն 7)	5,528	(5,894)
	55,288	81,642

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Վնաս մինչև հարկումը (համաձայն ՀՀՄՍ)	(76,347)		(6,846)	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով (2015թ.՝ 20%) (Զհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, գուտ	(15,269)	20.0	(1,369)	20.0
	70,557	(92.4)	83,011	(1,212.6)
Շահութահարկի գծով ծախս	55,288	(72.4)	81,642	(1,192.6)

### 23 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

#### 23.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Խումբն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

#### Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատումը կատարվում է՝ կիրառելով դատողություն, հիմնվելով նմանատիպ ակտիվների վերաբերյալ ղեկավարության անցած փորձի վրա: Ակտիվների հետ կապված ապագա տնտեսական օգուտները սպառվում են հիմնականում դրանց օգտագործման միջոցով:

Այնուամենայնիվ, շատ այլ գործոններ, ինչպիսիք են տեխնիկական կամ առևտրային բարոյական մաշվածությունը հաճախ հանգեցնում են ակտիվների հետ կապված տնտեսական օգուտների նվազեցմանը: Դեկավարությունը գնահատում է ակտիվների օգտակար ծառայության մնացած ժամկետները՝ հիմնվելով դրանց տեխնիկական վիճակի, ինչպես նաև այն ժամանակաշրջանի գնահատման վրա, որի ընթացքում ակնկալվում է, որ ակտիվները տնտեսական օգուտներ կստեղծեն Խմբի համար: Այս նպատակով ղեկավարությունն օգտագործում է հետևյալ գործոնները.

- ակտիվների ակնկալվող պիտանելիությունը;
- ակտիվների ակնկալվող ֆիզիկական մաշվածությունը՝ պայմանավորված դրանց գործառնական և պահպանման նկատառումներով;
- ակտիվների տեխնիկական և առևտրային բարոյական մաշվածությունը՝ պայմանավորված շուկայում փոփոխությունների հետ:

Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

#### *Շնորհների ճանաչում*

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 3.9-ում՝ շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավոր հավաստիացում, որ Խումբը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է: Յուրաքանչյուր դրամաշնորհային պայմանագրի համար, Խումբը գնահատում է, թե որքանով է հավանական, որ այն ամբողջովին կբավարարի դրամաշնորհին կցված պայմանները և շնորհը ամբողջովին կստանա: Նման գնահատում կատարելիս ղեկավարությունը հիմնվում է այդ և դոնորի հետ ունեցած նախկին փորձի, նման դրամաշնորհներն ամբողջովին իրականացնելու Հիմնադրամի հնարավորությամբ: Եթե ղեկավարության գնահատմամբ Խումբն ի վիճակի է բավարարելու դրամաշնորհին կից պայմանները և դոնորը պատրաստ է ամբողջովին Խմբին փոխանցել դրամաշնորհով նախատեսված գումարները, ապա Խումբը նման դրամաշնորհն անմիջապես ճանաչում է ֆինանսական հաշվետվություններում (որպես ստացվելիք նվիրատվություններ և հետաձգված եկամուտ)՝ այդ դրամաշնորհի պայմանագիրը կնքելու պահին: Այնուամենայնիվ, եթե ղեկավարությունը սխալվի իր գնահատումներում, ապա կառաջանա ֆինանսական հաշվետվությունները ճշգրտելու անհրաժեշտությունը և այդ ճշգրտումները կարող են էական լինել Խմբի ֆինանսական հաշվետվությունների համար:

#### *Գործարքներ կապակցված կողմերի հետ*

Խումբն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ: Նշված գործարքները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության պայմաններում Խումբը կատարում է դատողություններ գործարքների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործարքների, ինչպես նաև արդյունավետ դրույքաչափերի վերլուծությունների վրա:

#### *Վարկերի և դեբիտորական պարտքերի արժեզրկում*

Խումբը գնահատում է խնդրահարույց վարկերն ու կանխավճարները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ պարզելու համար, թե արդյոք առկա են արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներ: Մասնավորապես, ղեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է պահանջվող պահուստի չափը որոշել: Նման գնահատումները հիմնված են որոշ գործոնների շուրջ ենթադրությունների վրա, և ներկա արդյունքները կարող են տարբեր լինել՝ հանգեցնելով պահուստում հետագա փոփոխությունների:

Նշանակալի վարկերի և կանխավճարների համար անհատական ստեղծված հատուկ պահուստներից բացի՝ Խումբը նաև ստեղծում է արժեզրկման խմբային պահուստներ այն ռիսկերի գծով, որոնք չնայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր: Սա հաշվի է առնում այնպիսի գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են երկրի ռիսկի վատթարացումը,

արդյունաբերության մեջ և տեխնոլոգիական հնացումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թերությունները կամ դրամական հոսքերի նվազումները:

## 24 Ֆինանսական գործիքներ

### 24.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.7-ում:

### 24.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

#### *Ֆինանսական ակտիվներ*

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ		
ժամկետային ավանդներ	834,957	395,027
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ		
Արժեթղթեր և պարտատոմսեր	18,258	18,258
Վարկեր և դեբիտորական պարտքեր		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	245,962	596,382
Վարկեր հաճախորդներին	5,730,525	6,508,684
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	97,581	91,334
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	263,582	361,544
	<u>7,190,865</u>	<u>7,971,229</u>

#### *Ֆինանսական պարտավորություններ*

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	5,904,077	6,341,890
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	149,674	139,440
	<u>6,053,751</u>	<u>6,481,330</u>

## 25 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Խումբը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Խումբը չի ներգրավված սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Խումբն կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

### Ֆինանսական ռիսկի գործոններ

#### ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Խումբը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժույթային ռիսկի և տոկոսադրույքային ռիսկի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

#### Արտարժույթային ռիսկ

Խումբը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Խումբին ենթարկում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև:  
 Արտացուցված գումարները իրենցից ներկայացնում են հիմնական դեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով:

Հոդված

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ
<i>Ֆինանսական ակտիվներ</i>			
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ			
ժամկետային ավանդներ	60,355	35,854	-
Վարկեր և դեբիտորական պարտքեր Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	33,493	2,819	7
Վարկեր հաճախորդներին	215,517	-	-
Դրամական միջոցներ և համարժեքներ	290,126	71	47,762
	<u>599,491</u>	<u>38,744</u>	<u>47,769</u>
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	224,799	-	-
	<u>2,584</u>	<u>55,884</u>	<u>7</u>
	<u>227,383</u>	<u>55,884</u>	<u>7</u>
Զուտ արդյունք	<u>372,108</u>	<u>(17,140)</u>	<u>47,762</u>



**Հոդված**

	<u>ԱՄՆ դոլար</u>	<u>Եվրո</u>	<u>Այլ</u>
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
<i>Ֆինանսական ակտիվներ</i>			
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ			
ժամկետային ավանդներ	19,082	-	-
Վարկեր և դեբիտորական պարտքեր			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	234,351	2,558	98,017
Վարկեր հաճախորդներին	376,566	-	-
Դրամական միջոցներ և համարժեքներ	113,331	177,809	23
	<u>743,330</u>	<u>180,367</u>	<u>98,040</u>
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	398,553	-	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	6,984	40,673	-
	<u>405,537</u>	<u>40,673</u>	<u>-</u>
<b>Զուտ արդյունք</b>	<u><b>337,793</b></u>	<u><b>139,694</b></u>	<u><b>98,040</b></u>

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Խմբի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ դրամի 10% (2015թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2015թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2015թ.՝ 10%):

Դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 10%-ով (2015թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

	<u>ԱՄՆ դոլարի ազդեցություն</u>		<u>Եվրոյի ազդեցություն</u>	
	<u>2016թ.</u>	<u>2015թ.</u>	<u>2016թ.</u>	<u>2015թ.</u>
Շահույթ կամ վնաս	<u>37,211</u>	<u>33,779</u>	<u>(1,714)</u>	<u>13,969</u>

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Խմբի՝ արտարժույթային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

**բ) Պարտքային ռիսկ**

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Խումբը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Այս ռիսկի ազդեցությունը Խմբի համար առաջանում է տարբեր ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են դեբիտորական պարտքերը, ժամկետային ավանդները, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները, վարկեր հաճախորդներին, ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները և այլն: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ՝ հաշվեկշռային արժեքներ		
ժամկետային ավանդներ	834,957	395,027
Վաճառքի համար նատչելի ֆինանսական ակտիվներ	18,258	18,258
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	245,962	596,382
Վարկեր հաճախորդներին	5,730,525	6,508,684
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	97,581	91,334
Մնացորդներ բանկերում	262,642	360,911
	<u>7,189,925</u>	<u>7,970,596</u>

Հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Պարտքային ռիսկի մեծ մասն առաջանում է Խմբի՝ հաճախորդներին տրամադրվող վարկերից: Ռիսկերի ներկայացման նպատակով Խումբը հաշվի է առնում և համախմբում է պարտքային ռիսկին Խմբի ենթարկվելիության բոլոր տարրերը, ինչպիսիք են առանձին հաճախորդների, պայմանագրային գործընկերների հետ կապված ռիսկերը և արդյունաբերական ռիսկը:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը ժամկետանց դեբիտորական պարտքերի գծով ստեղծել է պահուստ՝ 10,696 հազար դրամի չափով (2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 821 հազար դրամ), ինչպես նաև հաճախորդներին տրամադրվող վարկերի գծով՝ 644,266 հազար դրամ (2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 382,818 հազար դրամ):

Դրամական միջոցների և դրանց համարժեքների մասով պարտքային ռիսկն ընդունելի է, քանի որ պայմանագրային գործընկերները հեղինակավոր բանկեր են:

## Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

### Աշխարհագրական սեզմենտներ

2016թ. դեկտեմբերի 31-ի և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքային ռիսկի ակտիվները գտնվում են ՀՀ-ում:

### Տնտեսության ճյուղեր

2016 և 2015թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ռիսկի ակտիվները ներառված են դրամական միջոցներ և դրանց համարժեքներում, իսկ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները կենտրոնացված են ֆինանսական ոլորտում: Հաճախորդներին տրված վարկերն ու փոխատվությունները և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարները հիմնականում կենտրոնացած են գյուղատնտեսության ոլորտում (մանրամասն վերլուծությունը տես 5 և 6 ծանոթագրություններում):

## Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն

Խումբը կարգավորում է վարկային ռիսկի մակարդակները՝ մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև վարկավորման ճյուղային կամ աշխարհագրական սեզմենտների գծով ընդունելի ռիսկի գումարների սահմանաչափեր սահմանելով:

Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են, և դրանց կառավարումը ենթակա է վերանայման տարեկան կամ ավելի հաճախակի կտրվածքով:

Մեկ վարկառուի գծով վարկային ռիսկի չափը՝ ներառյալ բանկերը և ֆինանսական կազմակերպությունները, ավելի սահմանափակված է լրացուցիչ սահմանաչափերով հաշվեկշռային և հետհաշվեկշռային ռիսկերի համար, ինչպես նաև օրական սահմանաչափերով՝ կապված առևտրային գործարքների հետ, ինչպիսիք են արտարժութային ֆորվարդի պայմանագրերը: Ընթացիկ ռիսկերի ենթարկվելու սահմանաչափերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Պարտքային ռիսկը նաև կառավարվում է վարկառուների և պոտենցիալ վարկառուների՝ մայր գումարի և տոկոսների վճարման կարողությունը պարբերաբար վերլուծելով և անհրաժեշտության դեպքում վարկի տրամադրման սահմանաչափերը փոխելով:

Ստորև ներկայացված են հատուկ հսկողության և զսպողական մի քանի այլ միջոցներ:

#### *Գրավ*

Խումբը կիրառում է բազմաթիվ միջոցներ վարկային ռիսկը զսպելու համար: Համընդհանուր գործելակերպ է հանդիսանում և հիմնական միջոցներից մեկն է համարվում տրամադրված դրամական միջոցների դիմաց գրավ վերցնելը: Խումբը կանոններ է սահմանում գրավի հատուկ տեսակների ընդունելի լինելու կամ ռիսկերի զսպման վերաբերյալ: Վարկերի և կանխավճարների համար գրավի հիմնական տեսակներն են.

- Հիպոթեքային պայմանագրերով գրավադրվող անշարժ գույքը,
- Սարքավորումներ և փոխադրամիջոցները:

Վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Խումբը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ է պահանջում, հենց որ համապատասխան անհատական վարկերի և կանխավճարների արժեզրկման հատկանիշներ են նկատվում:

#### *գ) Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, որ Խումբն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Խումբը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Խմբի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չգեղջված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Խումբը ստիպված կլինի մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2016թ.	Գործիքներ հաստատուն տոկոսադրույթով		
	Անտոկոս		Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույթ (%)			
Մինչև 6 ամիս	85,878	322,038	407,916
6 ամսից մինչև 1 տարի	25,908	891,131	917,039
1-5 տարի	-	4,728,796	4,728,796
	<u>111,786</u>	<u>5,941,965</u>	<u>6,053,751</u>
2015թ.	Գործիքներ հաստատուն տոկոսադրույթով		
	Անտոկոս		Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույթ (%)			
Մինչև 6 ամիս	102,538	569,729	672,267
6 ամսից մինչև 1 տարի	7,318	688,471	695,789
1-5 տարի	50,000	5,066,130	5,116,130
	<u>159,856</u>	<u>6,324,330</u>	<u>6,484,186</u>

Խումբն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը:

## 26 Պարտավորվածություններ

### 26.1 Գործառնական վարձակալության գծով պարտավորվածություններ

#### Խումբը որպես վարձակալ

Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարվելիք վարձավճարները ներկայացված են ստորև.

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մինչև 1 տարի	3,176	31,360
Ավելի քան 1 տարի և մինչև 5 տարի	2,783	16,484
	<u>5,959</u>	<u>47,844</u>

## 27 Պայմանականություններ

### 27.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով, ինչպես նաև միջազգային տնտեսական ճգնաժամը:

Հանքահումքային ապրանքների միջազգային գների հետագա անկումը, անորոշությունները՝ պայմանավորված ուղղակի կապիտալ ներդրումների ներգրավման հնարավորություններով, գնաճը, կարող են հանգեցնել Հայաստանի տնտեսության, ինչպես նաև Խմբի վիճակի վատթարացման: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա դատողություններն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Խմբի ակտիվների և պարտավորությունների մնացորդային արժեքի վրա:

Խմբի ղեկավարությունը գտնում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Խմբի տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

### 27.2 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Խումբը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Խմբի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Խումբը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

### 27.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Դեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

### 28 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները դրամարկղում ու բանկերում և մինչև 3 ամիս մարման ժամկետ ունեցող կարճաժամկետ ներդրումները՝ նվազեցված բանկային օվերդրաֆտի մնացորդով: Ֆինանսական տարվա վերջի դրությամբ դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված դրամարկղում և բանկերում մնացորդները կարող են համադրվել ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության հոդվածների հետ հետևյալ կերպ.

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	940	633
Բանկային հաշիվներ	262,642	360,911
Կարճաժամկետ ներդրումներ	407,019	130,326
	<u>670,601</u>	<u>491,870</u>

## 29 Կապակցված կողմեր

### 29.1 Վերահսկողություն

Հիմնադրամի կապակցված կողմեր են հանդիսանում Հոգաբարձուների խորհուրդը, որը կազմված է մասնավոր սեկտորի անկախ ներկայացուցիչներից, միջազգային և տեղական հասարակական կազմակերպություններ, կրթական հաստատություններ և գյուղական համայնքի ներկայացուցիչներ:

### 29.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Խմբի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<b>Գործարքներ</b>		
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Տրված կանխավճարներ	-	49,309
Ապրանքների վաճառք	1,670	20,970
Ստացված կանխավճարներ	-	10,540
Ծառայությունների մատուցում	-	548
Տրված դրամաշնորհներ	6,052	-
<b>Հազար դրամ</b>		
<b>Մնացորդներ</b>	<b>2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6,514	12,566

**29.3 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ**  
Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը.

Հազար դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ	156,434	168,832



